# «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի՝

15.2-րդ և 15.3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | |
|---|---|
| «15.2 ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին, (իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկները) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա), ինչպես նաև «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպված և հետագայում ներմուծվող, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ընթացակարգերով ԵԱՏՄ անդամ երկրներ վերամշակման նպատակով տեղափոխվող և հետագայում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների վրա): 15.3. գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի և սպառված առաջնային մարտկոցների և սպառված էլեկտրական կուտակիչների (բացառությամբ «Ժամանակավոր ներմուծում» և «վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակար-գերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող ներքոհիշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում | բազային տուրքի 2 չափով |

«Ժամանակավոր ներմուծում» և  «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրված` վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների վրա), ինչպես նաև «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպված և հետագայում ներմուծվող, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ընթացակարգերով ԵԱՏՄ անդամ երկրներ վերամշակման նպատակով տեղափոխվող և հետագայում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների վրա).

| | |
|---|---|
| ա) ԱՏԳ 760200, 7802 00 0000, 7902 00 0000, 8108 30 0000, 854810 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար | բազային տուրքի 4 չափով |
| բ) ԱՏԳ ԱԱ 8104 20 0000, 8111 00 1900 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար | բազային տուրքի 8 չափով |
| գ) ԱՏԳ ԱԱ 7404 00, 8110 20 0000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար | բազային տուրքի 1 չափով |
| դ) ԱՏԳ ԱԱ 7503 00, 8112 22 0000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար | բազային տուրքի 2 չափով |
| ե) ԱՏԳ ԱԱ 8002 00 0000, 8102 97 0000, 8105 30 0000, 8106 00 1000, 8107 30 0000, 8101 97 0000, 8113 00 4000 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր տոննայի համար | բազային տուրքի 4 չափով |
| զ) ԱՏԳ ԱԱ 8103 30 0000, 8109 30 0000, 8112 13 0000, 8112 52 0000, 8112 92 210 ծածկագրերին դասվող ապրանքների յուրաքանչյուր կիլոգրամի համար | բազային տուրքի 2 չափով |